46. ԱՆԻԿ ԲԱԼԱԴԵ ԿՈՒԶԵՆ

Կէղի, չէղի թաքավոր մի ու յոթ տղա։ Յոթ տղի խերը մեռնելուց հ՝առեճ օսիեթ էնեց ուրին տղեքներուն, ասաց.—Քարթըկեդար չէղնի էրթաք, վնասութեն կառնիք։

Խեր մեռավ, տարան պախին։ Տղեքներեն ճոչ տղեն ասեց.—Ախպըրտի՛ք, հ՝ելեք էրթանք էն Քարթըկե-դար, տեսինք հ՞որի մեր խեր չթողեր էրթինք էն սար։

Էտոնք լե հ՝ելան գացին։ Գացին տեսան յոթ գերընգի ղարկուկ էր ընտեղ։ Տեսան օր դև մի էնդեխեն փրցավ էկավ, ասաց.—Ծ՝յ, իմ փալեք[1] ի՞նչ աղեկ փալեք մ՝են էկած են։

Ախպըրտիք առան գերընդիք, հ՝ընգան քաղ կէնին։

Դևեն վերուց ախպըրտաց ասաց.—Ո՞ր մեկդ կարթալ դիտեք։

Վեց ախպեր ասին՝ «Մենք գիտենք»։ Պզդիկ ախպեր Անիկ ասեց.—Ես չգիտեմ կարթամ։

Դևեն հ՝ելավ գիրմ՝ գրեց ուր մոր, գրի մեջ գրեց ասաց՝ «Մերի՛կ, իդա Անիկ գիքա, օր էկավ, գԱնիկ մորթես, կէնես քարաբ, քառսուն լոշի մնչ փաթես դնես վրը Բալադե-Կուղե եզին, առնիս իգաս։

Անիկ առավ թուղթ, հ՝ընգավ ճամփու խետ։ Էկա՞վ, էկա՞վ, ասեց՝ «Տեսնեմ էդ ի՞նչ ա դևեն գրե թխթի մեջ»։

Ի՞նչ, կարթաց թուխթ, խասկցավ օր ուրին կուզա մորթել, զէն թուխթ ճղեց, թափեց, թաժա գրեց։ Գրեց մեջ՝ «Մարե՛, Բալադե-

---

1 Բանվոր, ֆահլա բառի աղավաղումը (Ծ. Բ.)։

Կուզին մորթես էնես կավուրմա, փաթես քառսուն լոշի մեջ, առնես հ՚իզաս»։

Մեր զարմացավ, ասաց.— Լաո՛, էն իմա՞լ կզիմիշի՝ Բալադե-Կուզին կմորթա։

— Է, ես ի՞նչ էնեմ, հանդե թխթի մեջ գրուկ ա, դու կասես, ես չդիտեմ կարդամ։

Հ՚ելան խըղրաց մորթեցին, էփեցին, փաթեց քառսուն լոշի մեջ, Անիկ չալկեց հ՚ընգավ ճամբախ, կավուրմեն պերեց դեին։

Դեն օր տեսավ մերն ու Բալադե-Կուզին չէրևաց, ինքն ուրին հերոստավ, թե՝ «Անիկ գնաց խաբեց զիմ մեր»։

Ախպրրտիք հ՚ելան հ՚ըմեն էզան մեկ ու փախան։ Գացին օտար էրկիր մի։ Էնտեղ Անիկ գնաց էղավ թաքավորին չբուխչի։ Ախպըրտիք մացին բեռեդե[2]։

Շաբաթ մը լըմենցավ, էկան ախպըրտիք Անկա մոտ, Անիկն ասաց.—Էդիկ թաքավորի դիվան ա, ձեր օտներուց թող կթափի, հ՚օդեն կկեղտոտի։

Ախպրրտիք հ՚ըռըկան ախպոր մոտեն, հ՚ելան գացին։ Ասին. «Դու չմոռնա՞ս, ախըր քու գլոխ օղիաթ[3] խաղանք»։

Օր մի ճոչ ախպեր էկավ թաքավորի մոտ, ասաց.—Թաքավոր ապրած, դու իմա՞լ թաքավոր ես, քըզի խրեղեն ձի չկա, էն դեին կա, էմա՞լ ձիմ՝ է օր ամբերու խետ կխաղա։

Էն լե կասա.—Էմա՞լ էնեմ, մարթ չկա էրթա բերե էն ձին ընձի։

Կասա.—Քու առջևի չբուխչին կանա էրթա բերե։

Թաքավոր կկանչա Անիկին, կասա.—Արի գնա՛ դեի ձին պեր, օր չպերես, քու վիզ կզարկեմ։

Անիկն հ՚ելավ, ուր աստված կանչեց, ընկավ ճամփու խետ կնաց։ Գնաց մտավ դեի տուն։ Գնաց ձիու թավլեն, ձեռ թալեց, ձին մաժեց։ Էմալ օր մաժեց, ձին խրխնջաց։ Դև արթավ։ Անիկ համան ղփայեն վորեց մտավ մեջ, օր դեն չտեսի գինք։

Դեեն առավ ճրաք էկավ իշկաց դես դեն, մարթ չկա։ Առավ ցախավել, հ՚ընգավ վըր ձիուն ու զարկեց, ասաց.—Դու կխրխնջաս, քնոց ընձի կարթնցուս, գող չկա, պան չկա։

Դեեն ա, դնաց քնավ, հ՚ընգավ խորունթ քուն։ Անիկ հ՚ելավ զձին մաժեց, ձին էլ ձեն չխանեց, հ՚ըռըկեր ա դեուց։

---

1 Չի ափսոսում (Ս. Բ.)։

2 Անգործ, պարապ (Ս. Բ.)։

3 Խաղ, փորձանք (Ս. Բ.)։

Հ'ելավ խեծավ զձին, քշեց, հ'ելավ դրսու դարգախ, դարձավ Անիկ զանգուն զարկավ, դևի դռեն հ'իմաց էրեց դևուն, թե Անիկ ձին տարա՜վ։

Անիկն ա, առավ ձին տարավ թաքավորին։ Թաքավոր շատ ուրախցավ վերեն։

Էկավ ճոչ ախպեր էնդիեն ասաց.—Թաքավոր ապրած, ի՞նչ էնեմ, ձին պերեց, շարք[1] չպերեց։

Ասաց.—Ըպա իմա՞լ էնեմ։

Ասաց.—Հ'ո՞րի իմալ էնես, Անիկ ձին կպերա, շարք չկեռնա՞ պերա։

Էմ լե կկանչա զԱնիկ, կասա.—Անի՜կ, քեզնե կուզեմ էրթաս զձիու վզի շարք լե պերես, չպերես՝ քու վիզ կզարկեմ։

Անիկ հ'ելավ հ'ընդավ ճամփու խետ գնաց։ Գնաց խասավ դևի տուն, մտավ ներս, տեսավ դևեն քնուկ ա։ Առեր է ձիու շարքն ուրին ձեռաց մեջ, պառկեր ա։ Անիկ զարկեց համան ձևի ձեռնեբաց միջեն փախցուց առեց տարավ։

Դևեն չուր ակխավ, Անիկ ճամբախ խըլըսցուց։ Տարավ շարք լե տվեց թաքավորին, թաքավոր ուրախցավ։

Էկավ էն դեխեն՝ Անկե ճոչ ախպեր, ասաց.—Էմա՞լ թաքավորմ՝ ես, դևին կա օսկի թաս, օսկի դգալ, քեզի չկա։

Թաքավորն ասաց.—Ո՞ն ա պերոզ։

Ասաց.—Անիկն ա պերոզ։

Թաքավոր կանչեց Անիկին.—Պիտի էրթաս օսկի թաս, օսկի դգալ պերես, չպերես, քու վիզ կզարկեմ։

Անիկ հ'ելավ հ'ընգավ ճամփեն, մտավ դևի տուն, տեսավ օր սլե մի կախուկ ա հ'առքեն, ձեռ թալեց, թաս առավ սըլի մեշեն փախավ։

Դևն արթավ, ասեց.—Հե՜յ վախ, Անիկ էկավ, օսկի թաս լե տարավ, ըպա իմա՞լ կէղի։

Մեր ասաց.—Էն կդելներ պե պախենք մեր ձեռներու մեջ, օր չտանի։

Անիկ առավ թաս, գնաց, տարավ թաքավորին։

Ճոչ տղեն էկավ, թաքավորին ասաց.—Ի՞նչ էնեմ օր, օսկի թաս պիրեց, գդալը չպերեց։

Թաքավոր կանչեց զԱնիկ.— Դու գացիր թաս պերիր, գդալ չպերիր։ Թե չպերես, քու վիզ կզարկեմ։

---

1 Զիասարք (Ծ. Բ.)։

Անիկն ա, հելավ հընգավ ճամփու խետ։ Գնաց մտավ դևու տուն։ Տեսավ օր դևեն պառկուկ ա, կդելներ ձեռներու մեջ կալիմ պոներ է։ Անիկն ա՝ ձեռ թալեց օր զկդալ փախցուցեր, գևեն ղէդոր ձեռ կայիմ կֆլեց[1]։

Դևեն բոռաց մոր.—Նանե՛, ճրաք կպու, ես գԱնիկ բռնեցի։

Օր մեր ճրաք կըպուց, մորն ասաց.—Գնա զնջիլ բե, կապենք սուն ղԱնիկ։

Սեր ղնջիլ բերեց, գԱնիկ կապեցին սան։ Ասաց.—Նանե, չախուն[2] բե, Անկե վիղ կտրենք։

Մեր լե ասաց.—Լաո՛, մըկա մորթես, կատվըներ կտանին Անկե միս կուտեն, թըխ մնա լուսուն, ես կմորթեմ, էփեմ էնեմ կավուրմա, ճամփեմ հիգա քե, ուտես։

Դևեն թողեց դնաց արտ։

Մեր թունիր վառեց, ճուր էռցուց, կանչեց ասաց.—Անի՛կ, արի՛ մտի պղնձի մեջ,—չէ՞ ճուր կբղբղկա։

Անիկն ասաց.—Նանե՛, մարթ շոռ ու ալնին կիշկա, նոր միս կթալա ճրի մեջ։

Դևի մերն ա, կղավ ճրի վրեն շոռ ու ալնին կիշկեր, Անիկ զպառավ քպռեց ճրի մեջ գլոխվեր։

Տղեն առավ կդելներ ու փախավ։ Գնաց տվեց թաքավորին։ Թաքավոր շատ ուրախցավ։

Դև իշկեց, իշկեց մեր չէկավ։ Ասաց՝ «Ասսու սիրուն, իմ մեր հընչի՞ չէկավ»։ Հելավ, թորկեց էկավ տուն։

Տեսավ օր միս էփուկ ա, ուրախցավ, ասաց՝ «Վա՛ղղա, իմ մեր Անկե միս էփեր ա, ինք գացեր դրկեցի տուն, կանի ես ուտեմ, չում իմ մեր հիգա գրկեցի տընեն»։

Կերավ, տեսավ ուր մոր ծրծեր հելավ։ Տփեց վըր գլխուն, աչքեր լալուց քոռցուց, ասաց՝ «Այ վա՛խ, Անիկ զիմ մոր գլոխ լե կերավ»։

Դևեն հելավ, աչքեր քոռ, էկավ նստավ թաքավորու խաս բաղչեն, զավթեց, էլ մարթ չըր հիխշըներ էն գեխով հընցներ։

Անիկա ճոչ ախպեր էկավ մըտ թաքավոր, ասաց.— Էդ իմա՞լ թաքավորմ՝ ես, դու դև չկանաս սպանես, էկեր ա, քու խաս բաղչեն զավթեր։

Էն լե վերցու կասա.—Էն դև ա, ես իմա՞լ կանամ բռնեմ։

---

1 Բռնեց (Ծ. Բ.)։

2 Դանակ (Ծ. Բ.)։

Ճոչ ախպեր կասա.—Թաքավոր ապրած, դու չկանաս, Անիկ կանա։

Թաքավորն ասաց.—Անի՛կ, դու կպերես դև՝ պի՛, չպերես՝ քու ղլոխ կզարկեմ։

Անիկն լե ասաց.—Տուր սղոց մի, ուրագ, մըխ ու տախտակ ես ղէն դևեն պիրեմ։

Անիկն առեց ուրագ, սղոց, տախտակ ու մըխ, գնաց խասավ բաղչեն։ Էն տեղ նստավ թըխթըխկուն խանեց, տախտակ տաշեց։ Դևեն վերցուց ասաց.—Էնի ի՞նչ թըխթըխկուն ա, էտտեղ գիքա։

Անիկն ասաց.—Դու չլսեր ես, Անիկ մեռեր ա, էնոր խամար թապութ[1] կշիքեմ։

— Վո՜ւյ, աստծու անկըշկըլեն քեղի էղնի։

— Ա՜խ, ես իմա՞լ էնեմ, Անկա բաժ չգիտեմ, կարճ էրա՞, չէ հ'երկեն ա։

Դևեն լե կասա.—Համան իմ բաժ տես, Անըկա բաժ լե տես։

Անիկն լե վերցուց ասաց.— Օր հըմալ ա, արի մտի թապութի մեշ, քու բաժով շիքեմ։

Դևեն հ'ելավ էկավ մտավ թապութի մեջ։ Խափաղ- կոռծեց վըրեն, մըխ մի զարկեց։

Դևեն ասաց.—Յա՜, յա՜, էդ ի՞նչ ա կէնես։

Անիկ լե ասաց.— Կա'նի, կջոռբեմ,—մըխմ՝ լե զարկեց։

Դև ճըվճըվաց, ասաց.—Էդ ի՞նչ ա կէնես։

Ասաց.—Աչկերտի քո՞ռ ա, ես Անիկն եմ, էկեր եմ խափեմ, քե մտուցի սնդուկ, քե կտանիմ թաքավորի մոտ։

Տարավ թաքավորի մոտ, ասաց.— Թաքավոր, զդև լե պերի։

Թաքավոր զդևն ըսպանեց։

Անիկին շատ փարա տվեց։ Անիկ թողաց գնաց ու ճամբու խետ։

Ախպրտիք մնացին, ուրանց վատութեն։

---

1 Դագաղ (Ս. Բ.)։

2 Կափարիչ (Ս. Բ.)։